Կանգ առած առաջին տեղը եղաւ Մանրէզ փոքրիկ քաղաքը՝ Մոնտերայէն երեք մղոն հեռու, ուր կար արի ատեն Սուրբ Տոմէնիկոս անուանով վանք մը և անկեղանց մը որ կը կոչուէր Սէն-Լիւս և կը գտնուէր քաղքին դռներէն դուրս՝ ուխտաւորները և հիւանդները պատսպարելու համար: Այս անկեղանցին մէջ բնակեցաւ, ուր աղքատներուն անդադար ծառայելուն հակառակ, ինքզինքը տուաւ այնպիսի ծանւթեան և խոտամբերութեան մը, որուն նմանը գրեթէ բնաւ չէ տեսնուած ամենէն նշանաւոր ծանաւորներու կեանքին մէջ: Ամբողջ շաբաթը ծոմ կը պահէր հացով ու ջուրով, բացի կիրակիէն, ուր քիչ մը խաշած բանջար կ'ուտէր վրան մօխը ցանելէ յետոյ: Քիչ կը ննջէր, չոր գետնի վրայ կը պառկէր, իր ուխտաւորի զգեստին տակ միշտ խարազան և երկաթէ գօտի մը կը կրէր: Օրը երեք անգամ խիստ կերպով կը ձաղկուէր: Վերջապէս մարմինը կը զրկէր ամէն հանգիստէ և կը մատներ ամէն տեսակ նեղութեան: Փորձութեանց և խորմանց յաղթելու համար աղքատներուն հետ ամէն ատենէ աւելի ընտելացաւ, և նոյն իսկ ամենէն զգուշիկ հիւանդներու ծառայութեան նուիրեց ինքզինքը: Այսուհանդերձ արտաքոյ կարգի աղօթք կ'ընէր. ամէն օր անպատճառ պատարագի և ժամերգութեան ներկայ ըլլալէն զատ եօթը ժամ կանոնաւորապէս ծուռիկ եկած մըտածական կ'ընէր որ միջոցին այնքան մտամոխի էր որ կարծես անշարժ կը կենար: Ստեպ կ'այցելէր Վալատորաի Տիրամօր՝ որ Մանրէզէն հազիւ կէս մղոն հեռու է, և այս փոքր ուխտագնացութեանց ատեն խարազին և երկաթէ գօտիին վրայ եղծի կամ ուրիշ փշոտ խոտերու գօտի մըն ալ կ'աւելցնէր:

Այն միջոցին Մանրէզի մէջ լուր ելաւ թէ մուրացիկ անծանօթ ուխտաւորը, ազնուական անձ մըն է որ կ'ապաշխարէ և Մոնտերայի մէջ շապիկն անգամ ուրիշին տալով աղքատի լաթ մը վրան տուեր է: Իգնատիոս զգաց թէ սկսած են իր վրայ հիստալ, և համեստութենէն՝ քաշուեցաւ քաղքէն վեց հօրիւր քալ անդին գտնուող մութ և խոր քարայր մը, որ մացառներով և փշերով ծածկուած էր և միայն ժայռի մը ճեղքէն մտած լոյսով կը լուսաւորուէր: Այս առանձնութեան արհաւիրքը ապաշխարութեան նոր ոգի մը ներշնչեց իրեն:

# ՅԻՍՈՒՍԵԱՆՅ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿԸ

Ազգերն ու ընկերութիւնք՝ ինչպէս անհատներն իրենց փորձի ժամերն ունին։ Աստուած թոյլ կու տայ շղթայազերծ փոթորիկներու յարձակումներն անոնց գէտ, փորձելու համար անոնց սէրն ու հաւատարմութիւնը։

Երկու դարէ աւելի էր որ Յիսուսի գիտուն և պանծալի ընկերութիւնը մեծամեծ ծառայութիւններ մատուցած էր ժողովրդոց, եկեղեցւոյ և մարդկութեան։ Իր հաստատութեան առաջին օրէն հանդիպած էր իր մէջ մի քայլին սիրոյ և աստեղութեան։ Բայց ընդհանրապէս սէրը կրօնի բարեկամներէ կուգար և աստեղութիւնն հաւատոյ և բարոյական թշնամիներէն։ Բան մը որոյ առջև բնութիւնը չապաստամբիր, եւ որուն համակերպելու համար չենք կարօտիր զիւցազնական ճիգերու։

1769ին հազիւ Քահանայապետական Աթոռ բարձրացած էր բաղմանմուտ եւ հոգեւոր Փրանկիսկեան կրօնաւոր մը, կարդինալ Լոռէնցօ Կանկանէլի, եւ ողջունուած՝ կաթողիկէ աշխարհէն Կղեմէս ԺԴ. սնուամբ, ահա Եւրոպիոյ անգութ իշխանք եւ թագաւոր շարունակելով իրենց նենգութիւնները՝ չեն շատանար իրենք միայն հալածել յղհամալստակ ու բաղմարդիւն միաբանութիւնը, այլ վատարար միացած անկրօններու եւ ամբարիշտներու վռնակին, կը խնդրեն կը թախանձեն, կը պահանջեն որ Յիսուսի ամենէն եռանդուն պաշտօնեաները պատժուին Յիսուսի Փոխանորդին ձեռք, և եկեղեցւոյ ամենէն անձնուրաց ծառաները լքուին հոգեւոր բարձրագոյն իշխանութեան կողմանէ։<sup>1</sup>

Առաքինի ու ազնուամիտ Քահանայապետին խիղճը կ'ապստամբի այս անողորմ առաջարկութեանց առջև, կը ջանայ ամենի բարկութիւնները դադրեցնել, եւ գթութիւն ու արդարութիւն ներշնչել արքայական սիր-

տերու։ Բայց ափսոս, ամէն ինչ ի գոչ։ Մեծագոյն աղետից սպառնալիքներ կը կրկնուին անշուր յամառութեամբ, եւ Ս. Քահանայապետը խոհեմութիւն կը համարի գոհել Յիսուսեանները եւ ընդհանուր հալածանքի մը գէտ պաշտպանիլ տրեղերական եկեղեցին։<sup>1</sup>

1773 Յուլիս 21ին կղեմէս ԺԴ. պաշտօնական գրութեամբ «Չնջուած» կը հռչակէ Յիսուսեանց Միաբանութիւնը, որ լռին ու յարգալիր գլուխ կը խոնարհեցնէ իր մահաւրճելին առջև, ո'չ մի բողոք, ո'չ մի գանգաւ կը լսուի երբեք, եւ կատարեալ հրաշալի օրինակ մը կու տայ բովանդակ մարդկութեան, բայց մանաւանդ եկեղեցւոյ զաւակաց։ Նա որ Յիսուսի բոլոր առաքինութեանց մէջ առաւելագոյն սիրով յարած էր հնազանդութեան, ցոյց տուաւ արդարեւ թէ ո'ր աստիճան հաւատարիմ էր իր սկզբնական, եւ տեսաւ աշխարհ թէ ինչպէս մինչեւ ի զիւցազնութիւն ի գործ դրաւ զայն, եւ իրեն համար եւս կրցաւ Պատմութիւնն արձանագրել բառական ճշգրտութեամբ «Լեալ հնազանդ մահու չափ»։

Կ'անցնի քառորդ դար մը եւ աւելի ու 1800 Մարտ 14ին ծիրանաւոր Բառնաբաս Քիարամոնդի կը բարձրանայ Գերագոյն Քահանայապետութեան՝ Պիոս Է. անուան ներքեւ։ Մեծամեծ յեղաշրջմունք տեղի ունեցած են քաղաքական Եւրոպիոյ մէջ, թագաւորք եւ իշխանք աւելի զբաղած են իրենց պահերու պահպանմամբ քան Յիսուսեանց կենօք ու մահուամբ, որոց ամենէն կատաղի ու ոխերիմ թշնամիներն ներկայացած են արդէն Աստուծոյ դատաստանին։ Ս. Պապը մտածելով եկեղեցւոյ ընդհանուր բարին, պաշտօնապէս կը վերահաստատէ Յիսուսի բաղմերախտ Ընկերութեան 1814 Օգոստոս 7ին «Sollicitudo omnium ecclesiarum» սահմանադրութեամբ։

Հետեւապէս այս տարի կը կատարուի

<sup>1</sup> Sidney Smith, *The Suppression of the Society of Jesus*, The Month. July, 1903, St. Louis P. de Ravignan, Clément XIV. Paris. 1882.

<sup>1</sup> Rauke. *Hist. de la Papauté*. t. III. p. 336.

այն բարեյաջող դէպքին առաջին հարիւրամիակն՝ ի մեծ ցնծութիւն քրիստոնաւոր աշխարհի:

Պիոս Ժ. ուղեւոր նոր հաւաստիք մը ընծայել իր սիրոյն եւ յարգանայ՝ քաջալերական ու զրուատալից թռչկոթով մը պատասխանած է Յիսուսեանց ընդհ. Մեծաւորին, Գեր. Հայր Փրանկիսկոս-Քսաւրիէ Վէրնցի, որ եկեղեցւոյ հոգեւոր նպաստները խնդրած էր այս առթիւ<sup>1</sup>: Ս. Քահանայապետը կը յիշէ նախ Յիսուսի Ընկերութեան Աստուծոյ եկեղեցւոյն մատուցած այնչափ շատ ու այնչափ մեծ ծառայութիւնները, եւ յետոյ Ռիսուսեանց եկեղեցիներն ու մատուռները պայցելող հաւատացելոց՝ ընդ սոլորական սխալմանօք՝ կը շնորհէ մի անգամ լիակատար ներողութիւն յառաջիկայ օգոստոս ամսոյն 4, 5, 6, 7 օրերը կատարուելիք ջերմեռանդութեանց առթիւ: Նմանապէս կը շնորհէ ներողութիւն եօթը տարիներու եւ եօթը քառամսից օգոստոս 4էն մինչեւ եօթը, ամէն անոնց որք գէթ զղջացեալ սրտիւ՝ Աստուծոյ շնորհակալ պիտի ըլլան եւ պիտի աղօթեն ըստ գիտաւորութեան Ս. եկեղեցւոյ կամ Քահանայապետին:

Հայոց ազգն որ երախտագիտութեան անմոռօրէնելի պարտքեր ունի առ հայասէր եւ առաքելական Միաբանութիւնն Յիսուսեանց, քաջայայտ ենք որ իր կաթողիկէ կղերով եւ բարի աշխարհականներով պիտի փութայ մասնակցիլ ջերմեռանդօրէն յիշեալ հանդիսութեանց որք տեղի պիտի ունենան ի Կ. Պոլիս եւ ի հայաբնակ գաւառս Գերայ. Յիսուսեան Հարց եկեղեցիներուն մէջ: Դարմանենք մեր էջմիածնական եղբարց կողմանէ գործուած սխալներն ու անխրաւութիւնները, եւ ապացուցանենք անգամ մը եւս թէ ուղղափառ հայութիւնը ազնուամիտ մարդկութեան հետ՝ դիտէ գնահատել արժանիք եւ առաքինութիւն, եւ չ'ուզեր լինիլ երբէք անտարբեր կամ ապերախտ իր բարերարներուն հանդէպ:

ՎԱՆԱԿԱՆ

21 Յունիս 1914

<sup>1</sup> Acta Apostolicae Sedis, Die 13 Maii 1914.

## ԳԱԹՈՒԷ ՄԷՋԶԷՊԻ ԷՍԱՍԼԱՐԸ(\*)

(Տեկամի)

Հալպու քի պու կիւն էքսէրիա վազը օլան նէ՝ տիր: Կէօրիւյօրուզ քի ֆէնալար միւվէֆֆալ վէ էյիլէր տէ մուազզապ օլույօրլար, ֆալիլէթ թագալի իսիլմէյիպ ֆըսգ ու ֆիւճուր ալզըշլանլօյօր: Էվվէթ, ատի ճանիլէր իչին մահքէմէլէր վար սըր: Փագաթ լէք չօզլարը եագալը էլէ վէրմէտիքէրինտէն մահքէմէլէր օ կիպիլէր հագգընտա հիւքիւմիւզ գալլօյօր: Ասըլ պէօյլէք ճինալէթլէրի իրթիքեապ իտէնլէր իչին հիչ պիր մահքէմէ եօգ սըր: Պագընլզ սէֆիյ, գալիմ, հանիս Ներոն Բօմա թախթընտա ճալիս, Ս. Պօղոս վէ Ս. Պետրոս իսէ Ներոնըն հապսխանէսինտէ մահպուս պուլուհուեօր... Ալլահըն ատալէթի նէրէտէ տիր պուրատա:

Հէր վազըթ վէ հէր եէրտէ զալիլէր, զատտարլար մէտի ու սէնայա նայիլ օլույօր, թաճ սլաշտա իճըսայի հիւքիւմէթ իտիյօր վէ քէյֆ մահէշա զէվզ ու սէֆա իչինտէ եաշալօրլար: Սալիլէր իսէ գուլմ կէօրիւյօրլար, իչկէնճէլէրէ մարուզ գալլօյօր, մարտիրոս իտիլլօյօրլար: Եա Ալլահըն ատալէթի նէրէտէ գալլօր... Բուլի արղտա նէ՝ գատար իսթիպատալար, նէ գատար հագսըզլըզլար, նէ գատար իֆալը շէնիա վազը օլմագտա տըր: Եա Ալլահըն ատալէթի նէրէտէ գալլօյօր... Էմին օլուհըզ քի ճէնապը Հագգ քէնտի ատալէթինտէն վազ կէշմէմիշ տիր, պու կիւն ֆէնալար թարաֆընտան սէվզ օլուհան գաշընն տամալարընը պիլէ գայտ ու զապթ իթմէքտէ տիր, վէ Ալլահըն Ալլահ օլտուղը գատար մուհագգագ տըր քի պիր կիւն օնլարըն ինթիգամընը ալաճագ տըր վէ հէր ֆէսլէ ֆէնսի հէրիմէ ցազարէն մուամէլէ իսկէն ֆիլ:

Հալպու քի պու տիւնեատէ պէօյլէ պիր մուամէլէ մութլագա կէօրիւլմէյօր, պինտէն ալէյ, օ պիր տիւնեատէ իճըա իտիլէճէք տիր: Էօյլէ իսէ, տէմէք տիր քի ինսանըն բուհը օնուհ ճիսմինին վէֆաթընտան սօնրատա եաշար վէ էօլիւմիւզ տիր:

(\*) Տեա թիւ 152. էջ 396:

Իշթէ պու սէպէպէ մէպնի տիր քի ձէ-  
նապը Հագգ սալիհլէրին տէ զահմէթ չէք-  
մէսինէ միւսաատէ իտէր, չիւնքի քէնտի ա-  
տալէթինի պիհագգըն իճրա իտէճէք պիր  
տարը ախրէթ վար տըր, Պու էօմրիւն աճը-  
լարը, ինսանը թագտիս իտէն քհնրիպիէր,  
չէրէֆէ տօղրու կէօթիւրէն մուհարէպիէր  
վէ պիզի վագիֆէմիզ տայիրէսինտէ գայիմ  
սագլայսն սէմանըն իիթարյար տրոյար:  
Մա մաֆիյ, Ալլահն քէնտի միւնթէխապլէ-  
րինէ հագըրլամըզ օլտուղը սաատէթէ նիս-  
պէթէն, պու աճը վէ միհնէթլէր հիշ մէսա-  
պէսինտէ գալըրլար:

Լիօն իիթիւլ հաքիւլէրի բաբագըն պիրինէ —  
սէն ճէհէննէմէ ինանը՞րմուըն — տէյէ սօրուլօր-  
լարուըն — Շու տիւնեատա վագը օլաըն կէօրիւլ  
տէ ճէհէննէմէ ինանմամագ նա՞սըզ գապիլ տիր: Պէն  
տինսիզ պիլէ օլաւմ, շու վագը օլան շէյլէրի կէօր-  
տիւլիւմտէ տինէ կէլիւտիւմ... ճէվապըն վէրիւր:

Պիզգաթ ծան Բուսօ պիլէ պու եօլտա մուհա-  
քէմէ իտէրտի, « Բուհըն էօլիւմիւլ օլտուղուշա  
տայիր պաշգա հիշ պիր սէպէպ վէ տէլիւմ օլմասն  
պիլէ, շու ալէմոն ֆէնալարըն իհրազը դալէպէ էյ-  
լէմէլէրի վէ էյիլէրին տա միհէն ու մէշագգա մա-  
րուզ գալըպ էզիլմէլէրի կիպի կէօղէ չարբան հագ-  
սըզըղը կէօրմէքիլիմ պու հալաթ իլէ պէրապէր  
պիզիմ իլուն հէր շէյ պիթմիշ օլմազ, էօլիւմիւլիւլ  
անիւտէն իթիպարէն հէր շէյ սըրասընա կիրէր տէ-  
մէյէ մէճպուր գալըրմօ. տէր իտի:

Հէմ տէ էսիլի վէ եէնի թարիխին չէհա-  
տէթիլլէ միւսպէթ պիր հագիգաթ տըր քի  
քիւրրէյի արղըն քեաֆֆէյի ապվամր, բուհը  
պէշէրին էօլմէտիլինի գապուլ իթմիշ տիր-  
լէր. էօլիլէր հագգընսա օլան հիւրմէքիէրի,  
էպա ու էճատտըն քիւլլէրի հագգընտա կէօս-  
թէրիլէն իհքիւրմըն քիլի վէ մէգարլար իւ-  
ղէրինէ ըէքզ իտիլէն միւհքեքմ պիւնալար  
օնլարըն պու գանաաթընա շահիտ տիրլէր:

Իշթէ պու ումուլի վէ լաիւլթէզէլզիլ  
գանաաթըն մէնչար, եա պիր հայաթը ուխ-  
րէվիլէնին լիւզուլմըն գապուլ վէ թաստիզ  
էլլէյէն ազլ ու իզուլ վէ եախօտ ձէնապը  
Հագգ թարաֆընտան իլք աթալարըմըզա վա-  
զը օլան վէ օնլար վապիթասըլա էմապլէ-  
րինէ թէվտի իտիլէն պիր վաճիի իպթիսայի  
օլապիլիր, իմտի մատամ քի կէրէք ազլ ու  
իլանըն վէ կէրէքսէ վահիի իպթիտաինին

(Révélation primitive) չէհատէթի մահգա  
պէյանը հագիգաթ տէմէք տիր: Շու հալտէ  
պիլ ճիւմլէ միլէլ ու ազվամըն գանաաթլարը  
բուհը պէշէրին էօլիւմիւլիւլիւլիւլիւլ ալընճա  
թաստիզ իտէրլէր:

Միլէլ ու ազվամըն քեաֆֆէսի տէ էյի-  
լէրին օնտա մէմուլն վէ մէսուտ օլաճագ-  
լարը պիր տարը միւլքեաֆաթըն վէ ֆէնա-  
լարըն տա ճէգատիտէ օլաճաղը պիր միհնէթ-  
կեհալն մէվճուտիլէթինէ ինանմը տըրլար:  
Եունանիլէրին վէ Բօմալըլարըն էլիլէ թա-  
պիր իթտիքլէրի օլալարը վէ տարը ճէհիմ  
օլմագ իւզրէ գապուլ էյլէտիքլէրի սիյահ  
թարթարը քիմ պիլմէզ: Պու խուսուստա  
միլլէթլէրին թարիխին օգուլմագ քեաֆի տիր:  
Պիր տարը ախրէթ, պիր հայաթը ուխրէվիլ-  
վար օլտուղը հագգընտաքի պու գանաաթը  
ումուլիլէյէն նէ՞ մանա վէրիլէպիլիր: Պու  
քհնրիպէ էսէրի տէնիլէմէզ, չիւնքի պիթ-  
թէճրիպէ կէօրիւլարը քի էօլիւմլէ հէր նէվի  
հայաթ սէօնէր կիպի կէօրիւլիւլար վէ էօլիւ-  
լէր տէ կէլիպ օ պիր տիւնեանըն վար օլ-  
տուղուշա ինսանլարը ինանտըրմայօրլար:

Պու գանաաթ՝ բասիւսալար վէ եախօտ  
աւսալըն ցուճուզըն պիր իճատը տա տէ-  
նիլէմէզ, չիւնքի գատիմտէ ճէգալարա մահ-  
քիւմ կիպի կէօսթէրիլէնլէր, Սիզիֆ, Թան-  
թալ կիպի հիւքիւմտարլար տրըլար:

Պիր հըզպը մեզհեպիլին թալիմաթը տըր  
տա տէնիլէմէզ, չիւնքի հայաթը ուխրէվի-  
լէյէն օլան իթիգատ պիլ ճիւմլէ մէզհէպլէրին  
էսասընը թէշքիլ իթմէքտէ տիր:

Հէվայի ցեվսանիլէնին մահուլը իյճատը  
տա գանն օլուշամագ, չիւնքի ախրէթ տէ-  
նիլէն հայաթ, հէվայի նէվսանիլէնին միւ-  
ճագաթը տրը:

Ճհալէքի տէ համ օլուշամագ, չիւնքի  
միւլթէմէտտին վէ միւլթէֆէնին գալմլարըն  
իթիգատը պու եօլտա իտի, Հաթթա թարի-  
լին պիր գանուշը վար տըր քի օնըն հիւք-  
միւնճէ պիր գալմլն պէօյիւլիւլիւլ բուհը  
պէշէր հագգընտաքի իթիգատըն պէօյիւլք-  
լիւլիւլնէ միւլթէնասիպ տիր:

Շու հալտէ պալատէ իրայէ օլուշան պու  
իթիգատը ումուլիլէ իքի սէպէպ կէօսթէրի-

լէսիւրի: 1. Ճէնապը Հաղգ կիպի եանըմագ լէ  
ալտաթմագտան միւնէզզէն օլան վահիի իպ-  
թիսայի: 2. Ազլ ու իզանը ինսանըն, գարչը յօ-  
նուլամաղ սէվզի թապիխի: Պու սէվզի թա-  
պիի ազլ ու իզան հէր մէքեան լէ հէր զէ-  
մանտա ախի էսասիյէյի թանըմագ մէնպու-  
րիյէթինտէ տիր: Զիչէրօնըն տէտիյինէ կէօրէ  
«Հէր թարսփտա, հէր քէս թարաֆընտան  
լէ հէր վազըթ ինանըմըն օլան պիր շէյին  
հազիգաթ օլմաը վիւճուպ թահթընտա տըր:»  
Պու իզանը ֆըթրինին պիր գայիտէյի քիւլ-  
լիյէսի տիր քի, պազը եէնի մատտիուներն  
պունա գարչը սէրտ իթտիքլէրի իթիրազլար  
հիւքիւմիւլ գալըրլար:

(Մապաի վար)

### Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀՈՒՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ.—Աւարիոյ-  
Հաւաքարի գահաժառանգ իշխան Ծրանց-Ֆէրաի-  
նանտի և կնոջը աշխարհագրորդ սպանման առթիւ  
Ամենապատիւ Գերերջանիկ Հրգեւոր Տէրը, Պօղոս  
Պետրոս ԺԳ. Թէրզեան Կ. Պատրիարք Տանն Կիլիկիոյ  
հետեւեալ հեռագիրը ուղղեց Աւարի-Հաւաքարի  
աղեւոր վեհապետին:

Բերա, 30 Յունիս 1914

Ն. Առաքելական Վեհափառութիւն  
Կայսր-Թագաւոր Յրանց Յօգէժ

Վիեննա

Անդարձանելի կորուստներէն խորապէս յուզ-  
ուած, անկեղծ ցաւակցութիւններ կը մատուցանէ  
Զեր Վեհափառութեան, կ'աղօթէ Աստուծոյ Զեր  
թանկագին օրերուն պահպանութեան համար, եւ  
կայսերական գերդաստանին երջանկութիւն կը  
մաղթէ:

Պատրիարք Թերզեան

—Ն Գերերջանիկութիւնը Յուլիս 1ին, Գերյ, Յով-  
հանէս Կ. Վ. Թումայեանի ընկերակցութեամբ Եւ-  
նի-Գիւղ աւսարիական դեսպանատունը դնաց և Բալ-  
լայիչինի դեսպանին յայտնեց իր և իր հասարակու-  
թեան ցաւակցութիւնները:

\* Յունիս 30ին, Պոսէն մեկնեցաւ Գեր, Մելքոն  
Վ. Թաղպաղեան, Պաթուսի ճամբով Սպահան ա-  
ւաքելութեան երթուլու համար:

\* Յունիս 27ին Պոսէն հասաւ Գեր, Մեսրոբ Վ.  
Քէշիշեան, Զմումեան Մարտնաթեան նորընտիր  
Փոխան—Մեծաւորը, և Յունիս 1ին մեկնեցաւ իր  
պաշտօնավայրը:

\* Յունիս 1ին արեւելեան ճեպընթացով Պոսէն  
դէպի Լուրտ մեկնեցաւ Արհիպատիւ Անտոն եպիս-  
կոպոս Պահապանեան վիճակաւոր Կեսարիոյ:

\* Արհիպատիւ Պետրոս Եպիսկոպոս Գրիգորեան  
Յունիս 6ին Հառմէն դէպի Լուրտ կը մեկնի, Ս. Հա-  
ղորդութեան Համաժողովին մէջ Ամենապատիւ Հո-  
գեւոր Տիրոջ ներկայացուցչի պաշտօնով:

\* Յունիս 28ին Նոր—Գիւղի Ս. Յ. Կարապետ  
եկեղեցւոյն մէջ տեղի ունեցաւ Ս. Յ. Կարապետին  
տօնախմբութեան հանգէտը, որ Յունիս 24ին փոխա-  
դրուած էր նոյն կիրակի օրը:

Նոյն եկեղեցւոյ Մեծ. Ժողովրդապետ Գեր, Պօղոս  
Վ. Մկրտիչեան ձայնաւոր պատարագ մատուցեց եկեղեց-  
ւոյն բարերարներուն, Թընկերեան Յովհաննէս պէյի և  
Գուլումճեան Պետրոս Էֆ.ի հոգւոյն համար, որոնց-  
մէ առաջինը շինել ստեղծ է եկեղեցին իսկ երկրորդը՝  
գետինը ընծայած է: Երգեցողութիւնները կատարե-  
ցին Մէհտեբեան Էֆ.ի կողմէ մարզուած Ծանարա-  
քի կղերանոցին աշակերտները: Պատարագէն յետոյ  
Թընկերեան և Գուլումճեան ընտանեաց տեղափոխեց  
ընդունելութեան սրահին մէջ իրենց գահութիւնը  
յայտնեցին արտողութեանը չքեղութեան համար:

Անոր անհաւատ հօրեղբորորդին, որ դեռ 19 տա-  
րեկան ըլլալով՝ Ժէհպի մաքրատան գիւնտապետ է,  
պախարակեց անոր ընթացքը: Վերջերս այս անհա-  
ւատին կոկորդին վրայ ուռեցք մը եղաւ, որով անոր  
ամբողջ գերդաստանը մեծ մատտանջութեան մատ-  
նուեցաւ: Նորագործը անմիջապէս խորհուրդ տուաւ  
որ Աստուծոյ և Սուրբ Կուսին զիմէ: Երեսուսորդ  
անհաւատը այս խորհուրդին հետեւեցաւ: Յաջորդ օրը  
ուռեցքը ամբողջովին անհետ եղած էր, և թաթարը  
դարձի գալով կը սկսէր քրիստոնէական վարդապե-  
տութիւն սորվիլ և մկրտութեան պատրաստուիլ:

Առաւօտեան և երեկոյեան ժամերգութեան առանձին, ինչպէս նաև ձայնաւոր պատարագին ժամանակ, եկեղեցին լի էր խուռն բազմութեամբ: Իրիկունը իմաստալից քարոզ մը խօսեցաւ Գերապատիւ Յակոբ Վ. Մարգարեան հոգաբարձու Ս. Փրկիչ Մայր եկեղեցւոյ: Ապա Սուրբ Հաղորդութեան օրհնութիւնը տուաւ Գեր. Ռաֆայէլ Վ. Էքմէքճեան. Մեծ-Ժողովրդապետ Ս. Փրկիչ մայր եկեղեցւոյ:

✠ Յունիս 28ին, Ս Աստուածածին տաճարինս եկեղեցւոյն մէջ երեկոյեան ժամերգութեան յետոյ Ս. Գրիգոր Լուսաւորչի վառ զեղեցիկ ներքող մը խօսեցաւ Գեր. Յովսէփ Վ. Մարութեան, Փոխան-Ժողովրդապետ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ: Ապա թափօրի հանուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի մասունքը և յետոյ Ս. Հաղորդութեան օրհնութիւն տրուեցաւ: Հանդիսագիրն էր Արհիպատիւ Անտոն եպիսկոպոս Պաշտպանեան, ներկայ էին Արհի. Արհի. Յովսէփ Արքեպիսկոպոս Ռաբոտեան Կ. Պ. Փոխանորդը և Մատթէոս Եպիսկոպոս Սիպեան և բազմաթիւ քահանայներ:

✠ Հետեւեալը կ'ընդունինք ի հրատարակութիւն:

Գեր. Տէր,

Կը ծանուցանեմ մեր Յարգոյ Հասարակութեան որ երկու օր առաջ տեղի ունեցած ընտրութեանց համար առանց խորհրդածութեան տուած քուէթուղթս իբր չեղեալ կը նկատեմ, և այս՝ կատարեալ հաւանութեամբս և բացօթեակ որոշմամբս:

ՄԵՍՐՈՊ ՎՐԻ. ՌԻՂՈՒՐԵԱՆ

Բերա, 30 Յունիս 1914

✠ Մեր Մարգարանու թղթակցէն կ'ընդունինք հետեւեալը.

Մայիս 27ին Արհի. Յովհ. Եպ. Նազլեան ճամբայ ելած է Սամսունէն, հինգ օր Հովիւս մնալէ վերջ՝ կը ժամանէ Մարգուան Գեր. Գրիգոր Վ. Հատիկեանի հետ, հոն Պենտէկոստէի սօնը կատարելու համար: Անոր գալուստեան առեւտիւր անգամ մըն ալ կը խանդավառէ Մարգուանու բարի ժողովուրդը: Երկրորդ օրը բարի գալուստեան երեկոյթ մը տրուեցաւ Աղքատախնամ եղբայրութեան երիտասարդաց կողմանէ, իրենց նուագի և երգի խումբերը մասնաւոր կտորներ պատրաստած էին Վալկերի և Վէրտի գլուխ-գործոցներէն: Եւ այս առթիւ շարադրուած ըլլալով բազմաձայն երգ մը ի պատիւ Արհի. վիճակաւորին՝ նուագեցին զայն ամենայն յաջողութեամբ: Դաշնակին կ'ընկերանային ջուլթակներու և սրինգներու խումբերը: Երգի և նուագներու խումբերը կը կառաւարէր նոյն եղբայրութեան նախագահ Գեր. Յովսէփ Վ. Յոզունի, որ անոնց յաջող կազմակերպութիւն մը տուած է: Տիրաւորն էֆ. Երէցեան կարգաց բարի գալուստեան ճառ մը, որուն մէջ ամենց կողմէ չարաչար կերպով անստեղծած ինչ ինչ հիմնական սկզբունքներ կը դաւանուէին: Ապա ողջերթի մաղթանքները կ'ուղղէր, անխորհրդով մօտակայ ճամբորդ ու-

թեան դէպի Լուրա և Հառլմ: և կը խնդրէր որ ժողովրդեան ուխտերն ալ մատուցանէ յոտս անուրա յղադեալ Մօր և Ս. Բահանայապետին, որուն ջերմ յարուսով պարաւանգուած է և պիտի ըլլայ Մարգուանու ժողովուրդը:

Ջանապան գրաբար և աշխարհաբար ուսումաւոր ուղերձներ կարգացուեցան և միջանկեալ ընտիր կտորներու երաժշտական քաղցրութիւնը՝ խիստ գոհ տպաւորութիւն թողուց հանդիսականներուն վրայ: Բոյոր կաթողիկէ հասարակութիւնը ներկայ էր նոյն երեկոյ:

— Հոգեգալուստեան օրը՝ Առաջին Հաղորդութեան հանդէսը տեղի ունեցաւ, հանդիսաւոր պատարագի երգեցողութիւնը Մարգուանու յատուկ կանոնաւորութեամբ կատարուեցաւ. երգիչ խումբին կը մասնացէր ըստ սովորութեան Աղքատախնամի նուագաւորներու խումբը: Բարոզեց Արհի. Յովհ. եպիսկոպոս Նազլեան, խորին աստուածաբանական բացատրութիւնները ա՛յնպէս դիւրամատչելի ըրաւ առանձին որ նոր հաղորդուելիք մանուկներէն սկսեալ մինչև ամենազարգացեալները գինոյցան շնորհաց սքանչելիքներուն քաղցրութեամբ: Նոյն օրը կը հաղորդուէին 127 հոգի— Կէս օրէն վերջը շատ սրտաշարժ եղաւ մանուկներու հրաժարման հանդէսը, որոնք հանդիսապէս առաջին հաղորդութիւնը ընդունելէ վերջ՝ կը հրաժարէին սատանայէն և անոր խարէութիւններէն, և կը խոստանային յարիւ միշտ Յիսուսի Բրիտոսոսի կրկին անգամ քարոզեց Արհի. վիճակաւորը բացատրելով հաւատքի գաղտնիքը, թէ ի՞նչպէս մանուկներու տեղամ դիւրամատչելի կ'ընէ ամենափոքր խորհուրդները:

— Յունիս 6ին կատարուեցաւ Աղքատախնամ եղբայրութեան նոր վարչութեան ընտրութիւնը: Տարեկան գործունէութենէ մը վերջը, ըստ օրինի դադարելով հին վարչութեան անգամները, նորեր ընտրուեցան, այս առթիւ ընդհանուր տեղեկագիրը կորդաց քարտուղարը, շատ գոհացուցիչ գործունէութիւն մը ունեցած էին տարուան մը շրջանին մէջ. ո և է պարտք մը չունենալէ զատ, 200 ոսկեղ մօտ դրամագլուխ մը կը մնար տրամագրելի, որուն տոկոսը տարուէ տարի աղքատաց կը բաշխուի:

— Յաջորդ օրը տեղի ունեցաւ Տիկնանց Ամենասուրբ հաղորդութեան միութեան վարչութեան ընտրութիւնը: Ասոնք ևս տարեկան շրջանը յրացուցած և գոհացուցիչ գործունէութիւն մը ցոյց տուած էին. այս տիկնանց միութիւնը, մասնաճիւղ մըն է աշխարհահաշակ ա՛յն միութեան որ հաստատուած է առաջին անգամ ի Պրիւքսէլ և այժմ՝ կեդրոնն է ի Հառլմ, Բօսթա Բիւյէ դուրս Մարմնոյ և Արեան եկեղեցւոյն մէջ: Այս միութեան նպատակն է աղքատ եկեղեցեաց օգնել, ճերմակեղէններ, սպառնալի, պատարագի գործածուելիք աւարկաններ հոգալ ի Մարգուան երկու տարի առաջ հաստատած է այս

միութենէն Արհի. Յովհ. Եպիս. Նազրեան, և շատ օգտակար եղած է: Ամբողջ եկեղեցւոյ սպասները լուալ, արդկել, նշայել, կարկտել, նորոգել և անգործածելիներու տեղ մասնաւոր նախարարութեամբ նոր պատրաստել, տհա մասնք են իրենց գործքերը: Ամէն ամսու առաջին հինգշաբթին ընդհանուր ժողով ունին և նոյն երեկոյ Ամենասուրբ Հաղորդութենէն ի բազմոցի դրուելով, մասնաւոր հսկում կը կատարուի, և բոլոր անդամները այդ հսկման ներկայ գտնուելով գտնէ ժամ մը Ամենասուրբ Հաղորդութեան այցելութիւն պիտի ընեն, որ պայման է նոյն միութեան շնորհուած ներողութիւնները շահելու:

\* Ամեն. Տէրը, բնութենէն Աւստրիական հոգեւորական Պաշտօնական Ամսիկն եղբարական մահուան անթիւ տուած հետազոտին հետեւեալ պատասխանը:

Վիեննա Շեռնարխն 1 Յուլիս 1914

Ն. Կայսերական եւ թագաւորական Առաքելական Վեհափառութիւնը բոլոր սրտանց շնորհակալ կ'ըլլայ Ձեր Ամենապատուութեան իրեն յայտնած անկեղծ ցաւակցութիւններնուդ համար:

Ն. Վեհափառութեան հրամանաւ ՊԱՐՈՆ ՏՐ ՇԻՒՍԸԼ

ՆԻՐՔԻՆ ԵՒ ՄԻՋՈՋԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ. — Հաւաքարհայտն սուգ անթեց Աւստրիոյ—Հունգարիոյ Պաշտօնական Ամսիկն խժոժական սպանումը որ տեղի ունեցաւ Սերայէվոյի մէջ Յունիս 28ին հետեւեալ պարագաներուն մէջ:

Արհի. Եպ. Պարոն—Պերոնիանտ և կինը երբ օթոմոպիլով քաղաքապետարան կ'երթային, ուր տեղական իշխանութեանց կողմէ ի պատիւ իրենց ընդունուելութիւններ պիտի կատարուէին, պոմպա մը նետուեցաւ օթոմոպիլին դէմ: Պոմպան ինկաւ արհի. դուքսին թեւին վրայ, սակայն արհի. դուքսը շարժումով մը զայն ետ մղեց, Պոմպան պաթեզաւ արհի. դուքսին օթոմոպիլը անցնելէն ետքը: Անոր հետեւող ուրիշ օթոմոպիլի մը մէջ գտնուած երկու հոգի պայթումէն վերաւորուեցան և ժողովուրդէն ալ վեց հոգի ծանրապէս վերաւորուեցան: Ոճրին հեղինակը՝ Թրէպինէցի գրաւոր մը՝ կապրինովիչ ձեռնակալուեցաւ: Քաղաքապետարանին մէջ տեղի ունեցած հան-

դիսական ընդունելութենէն ետքը արհի. դուքսն ու կինը իրենց պաշտօնը շարունակեցին քաղաքին մէջ: Այդ պահուն էր որ երկրորդ ոճիրը անոնց դէմ գործուեցաւ Պրատենիկ ըզվովէրով մը: Արհի. դուքսը երեսէն վերաւորուեցաւ և Արհի. դուքսին ալ փորէն: Իսկոյն կառավարական պաշտօնատունը տարուեցան, ուր քիչ ետքը մեռան: Երկրորդ ոճրին հեղինակն ալ ձեռնակալուեցաւ: Լիսէի Բ. դասարանի ուսանող է՝ Բրինսիք անունով՝ Կրահովցի ժողովուրդէ քիչ մնաց որ չզկտէր երկու ոճրին հեղինակները:

— Այս երկու ոճիրներուն հեղինակներն ալ Պաշտօնային Սերպեր են: ուստի ամբողջ Աւստրիոյ—Հունգարիոյ մէջ բուռն վայրոյթ մը գրգռուեցաւ Սերպերուն դէմ: Մօսթարի մէջ ամբարը ջարդեց 200ի չափ Սերպեր, հրդեհեց Սերպերու թաղը: Սերայէվոյի մէջ Սերպերու պատկանող 200ի չափ տուններ խառնութեան քարուքանդ եղան խցուած և իսկամ ցուցարարներու կողմէ:

— Բոլոր վեհապետները իրենց ցաւակցութիւնները յայտնեցին Պարոն Շեռնի Կայսր թագաւորին և մասնակցեցան անոր սուգին:

— Մեծ հանդէսներով հանդուցեալներուն մարմինները փոխադրուեցան Վիեննա, ուր Յունիս 1ին տեղի ունեցաւ թաղման արարողութիւնը որուն ներկայ եղան նաև նոցին Վեհափառութիւնք Վիլհէլմ կայսրը և Սպանիոյ, Պելճիոյ, Պափիերայի և Սաքսոնիոյ թագաւորները և Արթըր Բոնիօթի դուքսը:

— Ամբողջ աւստրիական մամուլը դրուատալից տողերով ի վեր կը հանէ հանդուցեալ Պաշտօնականին արժանիքները, իր կրօնական և քաղաքական բարձր առաքինութիւնները:

— Հանդուցեալը ամէն կերպով արժանաւոր յարգ կը նկատուէր իր ալեւոր և իմաստուն հօրեղբոր, որուն աւանդութիւնները պիտի շարունակէր և Աւստրիոյ—Հունգարիոյ թագին մեծ փայլ պիտի տար:

\* Թուրքիւ հիւն յարաբերութիւնները լաւ կերպարանք մը առնելու սկսան շնորհիւ թուրքական պէյի ձեռք առած աղղու միջոցներուն:

\* Ալպանիոյ խռովութիւնները կը շարունակուին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

|                                                |     |
|------------------------------------------------|-----|
| Դէպքեր եւ սկզբունքներ                          | 417 |
| Քանանայար պէյլէիք                              | 421 |
| Հին վաւերաբուրքեր                              | 424 |
| Եօթնակ Բիսսոնէի                                | 426 |
| Յիսուսեանց վերահաստատութեան առաջին ճարտարանակը | 427 |
| Գաթիի Մեղնէյի էսալարը                          | 428 |
| Տեղեկագրական                                   | 430 |

ԱՐՏՈՒՍՏԷՐ

ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ

ՏՆՈՐԸՆ-ԽՄԱՒԱԳՐԱԳԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. Վ. ԹԵՐԶԻՊՈՒՆԵԱՆ

Տպարան Կ. Արժագանց Երաբարեբի, Բերա, Պայրաժ փողոց 5 Գ Պայիք

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .— Թուրքիոյ համար տա-  
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20 .— մէկ թիւ՝ 1 դհկ. .— Արսասան-  
ման տար. Ծր. 10. վեցամս. 5 .— Վճարումնք կանխիկ են :

ՀԱՍՑԷ .— Կարողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, 4 .

Պոյիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ .— 1.— Արձագանգ կը հրատարակուի  
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-  
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է  
յօդուած: 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը  
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին:  
4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր: Յօդուածներու 5.—  
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-  
այն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք  
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է  
անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Գրիստ. Վարդապետութեան. գին 2 դհկն.:

Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դհկն.:

ՏՊԱՐԱՆ Կարողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստմանաց-  
նի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար կը տպուին ամեն տե-  
սակ ծանուցմունք, գիրքեր, տետրեր, հրաւիրագիրներ, քարտեր, քարդ-ատրէաներ,  
մահազդներ, եւն. եւն.: Գրիները անմրցելի կերպով տժան են Գեղեցկագիտական ճա-  
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյտ գոհ պիտի  
նշան:

# WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:

Vienne I. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prosnitz, Przemyśl, Salsburg, St. Poelten, Stanislau, Turnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau.

EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

*Siège à Galata, Place du Pont de Karakouy*

*Agences à Stamboul, Péra et Scatari.*

Le Wiener Bank-Werein fait toutes opérations de Banque et notamment :

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;

Escompte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'accréditifs simples et documentaires;

Paiements télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de titres, marchandises etc.

Achat de vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3.  $\frac{1}{2}$  % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.